


2022

24

W-76

1913

20 PARAS



24
 Կ-76

1913

Կ. ՊՕՒՐՍ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2010

23151

24
Ա. 76 ✓

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍԱԽԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

«Որովհետև զէշ զործին վրայ վճիռը շուտով չկատարուիր, այս պատճառաւ մարդոց որդիներուն սիրտը չարութիւն ընելու փափարով լեցուած է:»
ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ

Արդարութիւնը պաշտպանելու կարող և արդար դատաւորի մը տեսչութեան տակ կը գտնուի աս աշխարհս թէ իր վիճակին ձգուած է՝ կառավարուելու համար այն սկզբունքով որ կ'ըսէ «Իրաւունքը զօրաւորին է:» Աս հարցումին ո՞վ կրնայ համոզիչ պատասխան մը տալ:

Այն ատենէն իվեր, երբ մեր նախաձեռնողքը մեղանչեց, չարին իշխանութեանը տակ չարութեան կեդրոն մը եղած է աս աշխարհս: Արդար Արեւ սպաննուեցաւ իր չար եղբոր Կայէի կողմէ: Աստուած, Կայէին այս չարութիւնը չի դբուտեւելով զանիկա անիծեց թէև, բայց Արեւին իրաւունք չըրաւ, ու երկրիս վրայ թողուց անոր անմեղ արիւնը: Յետոյ, երբ երկրիս վրայի գրկանքն ու անիրաւութիւնը չափազանց շատցան ու Աստուծոյ համբերութեան սահմանը անցան, ան ատեն, ջրնեղեղին միջոցով կորսնցուց բոլոր չարերը: Եւ սակայն, գրկուածներուն իրաւունքը իրենց չի վերադարձուեցաւ: Սողոմ և Գոմոր քաղաքներուն ամբարշտութիւնը երբ իր կատարեալ աստիճանին հասաւ, երկինքէն ձծուձբ ու կրակ իջնելով փճացուց զանոնք: Եւ սակայն, չի պաշտպանուեցաւ զրկուածներուն իրաւունքը: Եզիպտոսի երկրին մէջ Իսրայէլի որդիները 200 տարիէն աւելի տառապեցան, ու երբոր որոշեալ ժամանակը եկաւ, Աստուած Եզիպտոսի Փարաօն թագաւորը զարնելով թէև ազատեց Իսրայէլի որդիները, սակայն բռնութիւններու տակ ճնշուելով կորսուողներուն իրաւունքը չի արուեցաւ: Աշխարհիս վրայ շատ բռնակալ թագաւորներ



137
339

2001



ու զօրաւոր կառավարութիւններ ելլելով քանի՛ անգամներ երկիրս արիւնով ոռոգեցին: Իրաւ է որ մասնաւոր ժամանակներու մէջ, երկինքի Աստուածը անոնց վրայ աստիճան մը դատաստաններ բերելով անոնց զօրութիւնը կտորեց, բայց և այնպէս, անոնց բռնութիւններուն տակ հիւժող խեղճերուն իրաւունք չեղաւ: Արդեօք մինչեւ վերջ պիտի շարունակէ՞ դէպքերուն այս ընթացքը: Այսչափ պիտի ըլլայ չարութեան վրայ յայտնուելիք Աստուծոյ դատաստանը: Այսչափով պիտի գոհացուի՞ արդարութեան պաշտպանութիւնը: Եթէ ոչ Աստուած աս աշխարհս արդարութիւնով պիտի դատէ և ամէն իրաւունքը իր տեղը պիտի բերէ:

Ճշմարիտ Աստուածը այս մասին իր խորհուրդը յայտնած է մարդուն. «Երբ որոշեալ ժամանակ ունենամ, ուղիղ դատաստան պիտի տեսնեմ:» Սաղմ. ՀԵ. 2.: Սողոմոն Ս. Հոգիով խօսելով կ'ըսէ թէ «Աստուծոյ վախցիր ու անոր պատուիրանքները պահէ, քանզի Աստուած ամէն գործը, ամէն ծածուկ բաներու հետ, թէ բարին և թէ չարը դատաստանի պիտի բերէ: «Ժող. ԺԲ. 13, 14: Յիսուս ալ ըսաւ թէ «Ամէն դատարկ խօսքի համար՝ զոր մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան:» Մատթ. ԺԲ, 36: Պօղոս առաքեալ աւետիս տուաւ Աթէնքի կռապաշտներուն, ըսելով «Վա՜մազի ինք օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ:» Գործ. ԺԷ. 31: Մարգարէներուն ամէնն ալ միաձայնութիւնով այսպէս կը վկայեն: Մակայն, Աստուած ասիկա որ ատեն պիտի կատարէ արդեօք: Աստուծոյ սուրբ մարգարէները տեղեկութիւն կուտան նաև դատաստանի ժամանակին նկատմամբ: Այո՛, Դանիէլ մարգարէին դիրքին եօթներորդ գլուխը այս մասին պէտք եղած տեղեկութիւնը կը պարունակէ, որուն համար սոյն գլուխը հոս նոյնութիւնով կ'ընդօրինակենք ու քննութեան կը սկսինք:

ԴԱՆ. Է.

1— Բաբիլոնի Բաղդասար բազաւորին առաջին տարին Դանիէլ երազ տեսաւ, ու իր անկողինին մէջ՝ իր գլխուն տեսիլներ. Եւ անկա երազը գրեց ու բաներուն համառօտութիւնը ըսաւ: 2 — Դանիէլ խօսեցաւ ու ըսաւ, Գիշեր տեսիլիս մէջ տեսայ որ անա երկինքի չորս հովեր մեծ ծովուն վրայ կը յարձակէին: 3— Ու ծովն չորս մեծ գազաններ էլան, որոնք իրարմէ տարբեր էին:

4 — Առաջինը առիւծի պէս էր, ու արծիւի թեւեր ուներ. ու կը տեսնէի մինչեւ անոր թեւեր փրցուեցան, ու երկէն վերացաւ, ու մարդու պէս տեսնուցաւ վրայ կայնեցաւ, ու անոր մարդու սիւս տեսցաւ:

5. Եւ անա ուրիշ երկրորդ գազան մը արջու նման՝ որ մէկ ֆուլին վրայ կայնեցաւ, ու բերանը, ակունքներուն մէջ, երեք կողի ոսկոր կար, եւ անոր այսպէս ըսիմ. Ելիւ, շատ միւ կեր:

6— Ասկէ ետք կը տեսնէի, եւ անա ընձու նման ուրիշ մը՝ որուն կռակին վրայ չորս թռչունի թեւեր կային. եւ այս գազանը չորս գլուխ ուներ, ու անոր իշխանութիւն տեսցաւ:

7.— Ասկէ ետք գիշերուան ցեսիլներու մէջ կը տեսնէի, եւ անա չորրորդ գազան մը. անկա անեղ, սուկալի ու խիտ գօրաւոր էր, եւ անկա մեծ երկաթէ ակունքներ ուներ, անկա կ'ուտէր ու կը փօշէր ու մնացածը տեսնուցի կը կոխէր, ու իրմէ առաջ եղող ամէն գազաններն տարբեր էր, եւ տարբեր էր ուներ: 8— Երբ ես այս եղջիրները կը դիտէի, անա անոնց մէջ ուրիշ պզտիկ եղջիր մը էլաւ, որուն առջեւն առաջուան եղջիրներէն երեք խլուեցան. եւ անա այս եղջիրին վրայ մարդու աչքերու պէս աչքեր, ու մեծ բաներ խօսող բերան կար:

9.— Ես կը տեսնէի մինչեւ արթուներ դուրսեցան, ու Հիմաուրցը նստաւ. անոր զգեստը ձիւնի պէս ներմալ, ու գլխուն մազը մախար բուրդի պէս էր, անոր արթուր կրակի բոցի պէս. ու անիւները վառած կրակի պէս էին. 10 — Անոր առջեւն կրակի գետ կ'ըլլէր ու կը վազէր. հազար հազարաց ծառայութիւն կ'ընէին անոր, եւ բիւրք բիւրուց անոր առջեւ կը կայնէին. ասեանք բազմեցաւ, ու զիրքեր բացուեցան: 11 — Այն ասեմ կը նայէի այն եղջիրին խօսած մեծ խօսքերուն ձայնին համար, ու նայեցայ մինչեւ այն գազանը սպանուեցաւ, եւ անոր մարմինը կտտուեցաւ ու կրակի բոցերու տեսցաւ: 12. — Եւ միւս գազաններուն իշխանութիւնը վերցուեցաւ, բայց մինչեւ ժամանակ մը ու ասեմ մը կեսնքի երկարութիւն տեսցաւ անոնց: 13 — Գիշերուան տեսիլներու մէջ կը

սեանի, եւ անա երկինքի ամպերով Որդւոյն մարդոյ նման մէկը կուգար, ու մինչեւ Հիմաւուրը եկաւ, եւ զանկա անոր առջեւ մօտեցուցին: 14— Ու անոր իշխանութիւն, պատիւ ու բազաւորութիւն տրուեցաւ, որպէս զի ամէն ժողովուրդները, ազգեր ու լեզուներ անոր ծառայութիւնը բնեն. անոր իշխանութիւնը յաւիտեանակա՞ն իշխանութիւն է՝ որ չանցնիր, ու բազաւորութիւնը չաւրուիր:

15— Ես Գանիէլս հոգւով վեցացայ իմ ներսիդիս, եւ իմ գլխուս սեպիւղները զիս խռովեցուցին: 16— Հոն կայնողներէն մէկուն մօտեցայ, ու այս ամէն բաներուն նեմարտութիւնը անոր հարցուցի. եւ անկա ինձի խօսեցաւ. ու այս բաներուն մեկնութիւնը ինձի գիտցուց: 17.— Այս չորս մեծ գազանները չորս բազաւորներ են, որոնք երկրէ պիտի ելլեն: 18— Եւ բազաւորութիւնը Բարձեալին սուրբերը պիտի առնեն, ու անոնք պիտի ծառանգեն բազաւորութիւնը յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտեանից:

19— Եսիր չորրորդ գազանին վրայով նեմարտիք գիտնալ ուզեցի, որ բոլոր միւսներէն տարբեր էր, ու խիստ անդ էր. անոր ակունքները երկաթէ, եւ ըզունները պղնձէ էին, անկա կ'ուսէր, կը փոշէր, ու մնացածը ոտքերով կը կոխէր: 20— Եւ անոր գուլար եղող տարբեր եղջիւրներուն վրայով, ու միւս ելածին վրայով՝ որ անոր առջեւէն երեք ինկան, այսինքն այն եղջիւրին վրայով՝ որ աչքեր ու մեծ բաներ խօսող բերան ունէր, եւ անոր դէմը միւսներէն մեծ էր: 21— Ես կը տեսնէի որ այն եղջիւր սուրբերուն հետ պատկանէր մեծ էր: 22— Մինչեւ որ Հիմաւուրը եկաւ, եւ Բարձեալին սուրբերուն իրաւունք տրուեցաւ, ու ծամանակը հասաւ որ սուրբերը բազաւորութիւնը առին: 23— Անկա այսպէս ըսաւ. Չորրորդ գազանը երկրի վրայ չորրորդ բազաւորութիւն պիտի ըլլայ, որ ամէն բազաւորութիւններէն տարբեր պիտի ըլլայ, ու բոլոր երկիրը պիտի ուսէ, ու զանկա պիտի կոչուի ու փոշէ: 24— Եւ այն տարբեր եղջիւրները այն բազաւորութիւններէն ելելու տարբերներ են, ու անոնցմէ ետք մէկ ուրիշ պիտի ելլէ, ու անկա առաջուկներէն տարբեր պիտի ըլլայ, եւ անկա երեք բազաւոր պիտի կործանէ: 25— Ու Բարձեալին դէմ խօսքեր պիտի ըսէ, ու Բարձեալին սուրբերը պիտի մտէ. եւ պիտի մտած ծամանակներ ու օրէնքներ փոխուի. ու անոնք մինչեւ ծամանակ մը. ծամանակներ ու կէս ծամանակ անոր ձեռքը պիտի տրուին: 26— Բայց ասեանը պիտի բազմի, ու անոր իշխանութիւնը պիտի վերցնեն, զանկա մինչեւ վերջը բնաջինջ պիտի բնեն ու կորսնցնեն: 27— Եւ բազաւորութիւնը ու իշխանութիւնը, ու բոլոր երկինքիցակ եղող բազաւորութիւններուն մեծութիւնը Բարձեալին սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի. անոր բազաւորութիւնը յաւիտեանակա՞ն բազաւորութիւն է, ու բոլոր իշխանները անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին:


28— Խօսքին մինչեւ վերջը հոս է: Չիս Գանիէլս իմ խորհուրդներս խիստ խռովեցուցին, ու երեսիս գոյնը փոխուեցաւ. եւ այս խօսքը արտա մէջ պահեցի:»

Ամէն անոնք որ կը կարդան Դանիէլի տեսած այս երազն ու անոր մեկնութիւնը, ինքզինքնին կը գտնեն այն շարք մը նշաններու տեսարանին առջեւ. որ կը ցուցնեն Աստուծոյ արդար դատաստանին ժամանակը: Տեսարանը խիստ պարզ և որոշ է: Նախ, յաջորդաբար չորս մեծ գազաններ կ'ելլեն, ու իւրեւ չարութեան գործիքներ, երկրիս վրայ աւերումներ կը գործեն. յետոյ, ճշմարիտ Աստուծոյ ատենը դրուելով իրաւունք կը տրուի սուրբերուն: Ատուգենք և որոշենք այս չորս մեծ գազանները.—

Դանիէլ մարդարէին ըսուեցաւ թէ «Այս չորս մեծ գազանները չորս թագաւորներ են, որոնք երկրէ պիտի ելլեն:» Հմր. 17: Աս խօսքերուն մէջ թագաւոր բառին ոչ թէ միայն մէկ անձ, հազա թագաւորութիւն ցուցնելը յայտնի է Հմր. 23ի մէջ ըսուած խօսքերէն թէ «Չորրորդ գազանը երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն պիտի ըլլայ» Այս չորս մեծ թագաւորութիւններէն յետոյ Բարձեալին սուրբերը պիտի առնեն թագաւորութիւնը ու անոնք պիտի ծառանգեն զայն յաւիտեանս յաւիտեանից: Այս գազաններուն ելած տեղը մեծ ծովն է, և անոնց ելլելն ալ տեղի կ'ունենայ երկինքին չորս հովիւրուն՝ մեծ ծովուն վրայ յարձակելով: Մարդարէական լեզուի մէջ ծով կը նշանակէ ժողովուրդներ, ազգեր ու լեզուներ: Յայտ. Ժէ. 15: Հովն ալ կը նշանակէ պատերազմներ, քաղաքական կոտորածներ ու բազաւորներ: Երեմ. Գ. 11—13: Ըսել է թէ այս չորս մեծ գազանները ծագում կ'առնեն պատերազմի հովիւրուն փշելովը՝ ժողովուրդներու, ազգերու և լեզուներու ծովուն վրայ: Դիւրին է գտնուիլ որոշելը: Դանիէլ երբ լսեց թէ «այս չորս մեծ գազանները չորս թագաւորներ են, որոնք երկրէ պիտի ելլեն» հասկցաւ թէ անոնք՝ նախապէս Բարելոնի Նարուզուդոնոսը թագաւորին ցոյց տրուած մեծ արձանին չորս մասերուն ցուցուցած չորս թագաւորութիւններ են, և ուստի, երեք գազաններու մասին առանց բան մը հարցնելու, միայն չորրորդ գազանին նկատմամբ ուզեց աւելի տեղեկութիւններ առնել:

ԱՌԱՋԻՆ ԳԱԶԱՆԸ — ԱՌԻԻՄԻ ՊԷՍ

Վերոյիշեալ մեծ արձանին գլուխը զուտ ոսկիէ ըլլալով կը ցուցնէր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին իշխանութիւնը: Տես Դանիէլի երկրորդ գլուխը: Հետեւաբար, Դանիէլ մարգարէին ցոյց տրուած առաջին գազանը ևս, որ առիւծի պէս էր, ու արծիւի թեւեր ունէր, կը նշանակէ ձիշտ նոյն,



այսինքն Բաբելոնի թագաւորութիւնը: Ինչպէս որ առիւծը գազաններու թագաւորն է, նմանապէս, Բաբելոնի թագաւորութիւնն ալ, Նաբուգոդոնոսորի ձեռքին մէջ, բոլոր թագաւորութիւններու ամենափառաւորը եղաւ: Արծիւի

թեւերը ցոյց կուտան թէ ի՞նչպիսի արագութիւնով ընդարձակուած է նոյն թագաւորութիւնը: Նաբուգոդոնոսոր թագաւոր, 44 տարի, առիւծանման քաջութիւն ու մեծափառութիւնով տիրապետելէ վերջ, թագաւորութեան փառքը սկսաւ արագօրէն նուաղիլ. անանկ որ, 22 տարի միջոցին չափազանց տկարացած ըլլալով, Բաղդասար թագաւորին երրորդ տարին (Ք. Ա. 538) յաղթուեցաւ Մարայ-Պարսից բանակներուն միջոցով, ու այսպէս, բոլորովին զրկուեցաւ իր առիւծապատկան քաջութիւն ու փառքէն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱԶԱՆԸ — ԱՐՁՈՒ ՆՄԱՆ

Մեծ արձանին արծաթէ կուրծքն ու թեւերուն ցոյց տուածին համեմատ, արջու նման այս երկրորդ գազանն ալ, ցոյց կուտայ Բաբելոնի թագաւորութեան յաջորդող Մա-


րաց-Պարսից թագաւորութիւնը, որ արիւն թափելու շատ սիրահար ըլլալով, երեք կողի ոսկորներուն նշանակութեանը համապատասխան՝ փշրեց Բաբելոնի, Լիտիայի և Եգիպտոսի թագաւորութիւնները, ու Հնդկաստանէն մինչև Եթէ-



ովպիա՝ 127 նահանգներու վրայ տիրապետեց: Եսթ. Ա. 1:

ԵՐՐՈՐԴ ԳԱԶԱՆԸ — ԸՆՁՈՒ ՆՄԱՆ

Մեծ արձանին պղինձէ մէջքն ու ազդրերուն ցոյց տուածին համեմատ, ընծու նման այս երրորդ գազանը կը ցուցնէ Յունական թագաւորութիւնը: Կռնակին վրայ թռչունի չորս թեւերը ցոյց կուտան այն արագ յաղթութիւնը զոր ունեցաւ Մեծն Աղէքսանդրի իշխանութեան միջոցին,—12 տարուան մէջ բոլոր աշխարհին տիրեց: Աղէքսանդր յանկարծ մեռնելով, թագաւորութիւնը, ընծուն չորս գլուխներուն նշանակութեանը համապատասխան, չորս մասերու բաժնուեցաւ՝ անոր չորս մեծ հրամանատարներուն ձեռքին մէջ. — Քաաէնարոս տիրեց Մակեդոնիայի և Յունաստանի, Լիսիմազոս՝ Փոքր-Ասիայի, Պտղոմէոս՝ Եգիպտոսի և Արարիայի, իսկ Սելեւգոս՝ Սիւրիայի և արեւելեան երկիրներու:



գաւ անոր չորս մեծ հրամանատարներուն ձեռքին մէջ. — Քաաէնարոս տիրեց Մակեդոնիայի և Յունաստանի, Լիսիմազոս՝ Փոքր-Ասիայի, Պտղոմէոս՝ Եգիպտոսի և Արարիայի, իսկ Սելեւգոս՝ Սիւրիայի և արեւելեան երկիրներու:

ՉՈՐՐՈՐԴ ԳԱԶԱՆԸ — ԱՆՆՄԱՆ

Մեծ արձանին երկաթէ ազդերըն ցոյց տուածին համեմատ, ահեղ, սոսկալի ու խիստ զօրաւոր շորրորդ գազանը կը ցուցնէ Հռովմէական թագաւորութիւնը, որ կ'ուտէր ու կը փշրէր, ու մնացածը ոտքերովը կը կոխէր: Ինչպէս որ



Կիպըն անուն պատմիչն ալ կ'ըսէ, «Հռովմէական թագաւորութիւնը բոլոր աշխարհին տիրեց, ու երբ առ թագաւորութիւնը մէկ անհատի ձեռքն անցաւ, աշխարհ՝ ահա նոր թշնամիներուն համար հաստատուն և սոսկալի բանտ մը եղաւ: Ընդդիմութիւնը կորուստի պատճառ ու փախուսան ալ անկարելի էր:» Աշխարհիս պատմութեան տեղեակ եղողներ զիտն թէ Հռովմայեցիներուն երկաթաման խիստ թագաւորութիւնը, նախորդ բոլոր թագաւորութիւններէն չափազանցօրէն աւելի սոսկալի էր՝ կոտորելու, փշրելու և փճացնելու մէջ: Աս թագաւորութիւնը իր աշխարհակալական ուղղութեան Բ. Ա. 168ին սկսաւ Մակեդոնիան զրաւելով. և 500 տարիէն աւելի շարունակելէ վերջ՝ Յ. Տ. 350—483, հիւսիսի ցուրտ կողմերը բնակող բարբարոս անգիւրուն յարձակումներուն չի կրնալով դիմանալ՝ կոտորեցաւ, ու գազանին ցոյց տուած տասը եղջիւրներուն համաձայն, տասը բացարձակ թագաւորութիւններու բաժնուեցաւ, որոնք հետեւեալներն են. — Սլամներ, Ֆրէնքներ, Պուրկոնսաններ, Վանտալներ, Սիւէվներ, Վիզիկոթներ, Սաքսոններ, Օսթրոկոթներ, Լոմպարաներ և Հերուլներ:

ՀՌՈՎՄԵ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆԻ ՎԱՐՅՈՒԹԻՒՆԸ, ՄԱՍԸ ԳԱՆԱԳԱՆ ԱԶԳԵՐՈՒ ԶՆՈՔՆ ԵՆՆԵՆԵԼԷՆ ՎԵՐՋ, ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՈՒՄԸ ՄԵՋ ՄԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄԱՃԱՅՆ, ՍՈՅՆ ՄԱՍԸ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋԷՆ ԵՂԱԸ ՆՈՐ ԵՎ ԱՆՈՆԵՄԸ ԲՈՂՈՐՈՎԻՆ ՄԱՐԲԵՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ ՄՐ ԵՍ, ՈՐ ԱՆՈՆԵՄԸ ԵՐԵՔԻՆ ԶԱԿՈՒԵԼՈՒՆ ՎԱՏՈՃԱՈՒ ԵՂԱԸ: Այս նոր թագաւորութիւնը Պապական իշխանութիւնն էր, և միւսներէն



կը տարբերէր սա տեսակէտով որ՝ մինչ միւս թագաւորութիւնները աշխարհային և քաղաքական էին, աս թագաւորութիւնը հոգեւոր ու եկեղեցական էր: Սոյն տասը թագաւորութիւններէն եօթը ընդունած ըլլալով Հռովմէական եկեղեցին դաւանանքը, միւս երեքը չընդունեցին և ահա նոյն համար հերետիկոսութիւն նկատուած Արիոսականութեան հետեւելով, Հռովմի մէջ Պապական իշխանութեան հաստատուելուն արգելք կ'ըլլային, և ուստի, Հռովմի ետիսկոպոսը, զանազան միջոցներով յաջողեցաւ քակել աս երեքը: Անոնք հետեւեալներն են. — Հերուսներ Յ. Տ. 493, Վանտալներ՝ 534 և Օսթրոկոթներ՝ 538: Ասոնց քակուելովը Պապական իշխանութիւնը հաստատուեցաւ: Հետեւաբար, Պապական իշխանութեան բացարձակ միահեծանութիւնը կը սկսի Յամի Տեառն 538 էն:

ԲԱՐՁՐԵԱԼԻՆ ԴԷՄ ՀԱԿԱՌԱԿՈՒՅԻՒՆ

Մեկնիչ հրեշտակը Դանիէլ Մարգարէին այսպէս ըսաւ Պապական իշխանութեան նկատմամբ. «Բարձրեալին դեմ խօսեք պիտի բռնէք, ու Բարձրեալին սուրբերը պիտի մաքէք, եւ պիտի մտածէք ժամանակներ ու օրէնքներ փոխելու. ու անոնք մինչեւ ժամանակ մը, ժամանակներ ու կես ժամանակ անոր ձեռքը պիտի տրուին» Դան. է. 25: Պապական իշխանութեան վրայ բառ առ բառ կատարուեցան մարգարէութեան աս խօսքերը: Ինչպէս.—

ԲԱՐՁՐԵԱԼԻՆ ԴԷՄ ԽՕՍԻՅԵՐ ԽՕՍԵՅՍԱԻ: Գրիգորիոս է. Պապին կանոնադիրներէն մէկին մէջ ասանկ գրուած է. «Ամբողջ իբխաններ Պապին ոտքը համբուրելու են». կայսրները պաշտօնազուրկ ընելը անոր կը պատկանի: Անոր տուած վճիռն դէմ մէկը չի կրնար ընդդիմութիւն ընել, և սակայն, ինք և միայն ինք կրնայ ջնջել բոլոր մարդկութեան տուած դատաստանը: Հռովմէական եկեղեցին բնաւ չէ սխալած ու յաւիտեան չի կրնար սխալիլ: [*] Յ. Տ. 1098, Հռովմի մէջ կազմուած մեծ ժողովի մէջ այսպէս խօսած է Իւրպան Բ. Պապը. «Հրեշտակներէն ու եւ կ'մեկին չի տրուած բարձրութեան մը կը հասնին քանակաբարձ անոնք, այսինքն, ամեն բանի արարիչը եղող աստուածը ինք կը ժողովէ ու գանկիւ՝ բոլոր աստուածներէն համար կը ներկայացնէ» [**] Անգլիացի կարտինայ Մանինկ. իր քարոզներէն մէկին մէջ հետեւեալ խօսքերը գրած է Պապին բերանը. «Ես բնաւ քաղաքական քաղաքացիութիւն մը չեմ նանչնար: Մարդոց խղճմաններուն

վրայ ես եմ ամենաբարձր դասաւորն ու հրամայողը: Իրաւունքն ու անիրաւութիւնը զատուող բացարձակ դասաւոր միայն ես եմ» [*] Պապերու կողմէ արտասանուած այսպիսի հայեցողութիւններ խիստ շատ են: Բարձրեալին դէմ տակաւին ինչպիսի խօսքեր կրնային ըսուիլ:

ՄՏԱԾԵՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՈՒ ՕՐԷՆՔՆԵՐ ՓՈՒՍԵԼ, Բարձրեալին կողմէ գրուած ժամանակներն ու օրէնքները յաւիտեանական ըլլալով կարելի չէ որ մարդոց կողմէ փոխուին, և սակայն Պապական իշխանութիւնը զանոնք փոխել մտածեց: Չոր օրինակ, Աստուած երկինքն ու երկիրը վեց օրուան մէջ ստեղծեց և Խօթնորդը օրը հանգչեցաւ, անոր համար նոյն օրը օրհնեց և սրբեց, և զանիկա իր ճշմարիտ Աստուած ըլլալուն իբրեւ մասնաւոր նշանը՝ Տամարամեայ պատուիրանքին մէջ՝ ստեղծ գրաւ: Ծրնդ. Բ. 1—3, Ել. Ի. 8—11, ԼԱ. 13—18: Հռովմի եկեղեցին, Աստուծոյ հանգստութեան օրը նոյն շաբաթը վերցնելով, անոր տեղ գրաւ մէկշաբթիի ու անոր օրերը:

Նմանապէս, օրուան սկիզբը՝ արեւամուտէն վերցնելով կէս գիշերուան փոխադրեց: Աստուծոյ օրէնքը մինչ կ'արգիլէ պատկերներուն առջեւ Աստուծոյ երկրպագութիւն ընելը (Ել. Ի. 4—6, Բ. Օր. Գ. 15—20), Հռովմի եկեղեցին պատկերները պաշտամունքի մէջ մտցուց: Ասոնցմէ զատ, Յիսուոյ հաւատքին յաւիտեանական սկզբունքներն ալ խիստ շատ փոփոխեց: Ստուգիւ, Պապական իշխանութիւնը մտածեց Բարձրեալին ժամանակներն ու օրէնքները փոխել:

ԲԱՐՁՐԵԱԼԻՆ ՍՈՒՐԲԵՐԸ ՄԱՇԵՑ: Մարդկային լեզուով չի կրնար պատմուիլ այն բոլոր նեղութիւնները զոր Պապական իշխանութիւնը հասուց սուրբերուն: Շատերը սղոցով կարուե-

[*] Baronius, Annals, 1076, Hildebrand, Epistle, 55:

[**] Dowling's Hist. of Romanism, page 269, Ed. 1870:

[*] Our Country, by Gosiah Strong, page 53, Ed. 1885.

ցան, ողջ ողջ այրուեցան, թեւերն ու ոտքերը մարմինէն բաժնուելու աստիճան մեքենաներու վրայ պրկուեցան: Սուրով զլխատուեցան: Սա Հոովմեական եկեղեցիին կրօնական վարդապետութիւնները շրնդունեիկն գաս ուրիշ յանցանքներ չունեիկն:

Եւրոպայի հողը քանիցս ռուսացուեցաւ 50 միլիոնէ աւելի սուրբերուն անմեղ արիւնովը, ուրնմ: Աստուած ալ յաւելով, սուրբերուն իրաւունք ընկու չի ձեռնարկեց:

ԱՆՈՒՔ ՄԻՆՁԵՒ ԺԱՄԱՆԱԿ ՄԸ, ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՈՒ ԿԷՍ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՈՐ ՁԵՌՔԸ ՏՐՈՒԵՑԱՆ: Ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակին 1260 օրուան միջոց մը ըլլալը որոշակի կը յայտնուի Յայտ. Ժ. 6, 14 ի մէջ: Մարդարէական յայտնութիւններու մէջ, մէկ օրուան մէկ տարիի հաւասար ըլլալը որոշակի կը տեսնուի Եզեկ. Դ. 6 ի և Թու. Ժ. 34 ի, և թէ Դան. Ը. 24—27 ի հաշիւներուն մէջ: Ուրեմն, ժամանակ էր, ժամանակներ ու կէս ժամանակի շրջանը ցոյց կուտայ 1260 տարի: Եւ այս ալ կատարուեցաւ Պապական իշխանութեան վրայ: Թէ ինչպէս, սոյն իշխանութիւնը, նախապէս ըստածին համաձայն, Յ. Տ. 538, Օսթրօլիօններուն քակուելովը հաստատուեցաւ, և ճիշտ 1260 տարի շարունակելով, սոյն ժամանակամիջոցին վախճանին, Յ. Տ. 1798, Ֆրանսական կառավարութեան կողմէ մեծ հարուածի մը ենթարկուեցաւ: Հրամատար Պէրթիլէ, Ֆրանսական բանակներով Հոովմ մտաւ ու Հանրապետութիւն հռչակեց, և Պապն ալ կալանաւոր՝ Ֆրանսա աքսորեց: Այսպէս, Պապին քաղաքական իշխանութիւնը վիրաւորուեցաւ: Յետոյ, Յ. Տ. 1870, Վիքթորէմմանուէլ, յաղթական բանակներով Հոովմ մտաւ ու Պապին քաղաքական իշխանութեան վերջին մնացորդն ալ փճացնելով,

Հոովմի մէջ հաստատեց հիմակուան Իտալական կառավարութիւնը:

ԱՏԵԱՆԸ ԲԱՉՄԵՑԱԻ, ՈՒ ԳԻՐՔԵՐԸ ԲԱՅՈՒԵՑԱՆ, Դանիէլ մարգարէ երբ կը դիտէր Պապական իշխանութիւնը ցոյց տուող պզտիկ եղջիւրին՝ Բարձրեային դէմ մեծ խօսքեր խօսիլն ու Բարձրեային սուրբերը մաշելը, երկինքի մէջ խիստ մեծ շարժում մը նշմարեց: Աստուծոյ արդար դատաստանին ժամը եկած ըլլալով՝ աթոռներ դրուեցան, ու Հինաուրցը նստաւ, և Անոր առջեւ ծառայութիւն ընող հազարաւոր և բիւրաւոր հրեշտակներուն միջոցով՝ արձանագրութեան գիրքերը բերուեցան, առեանը բազմեցաւ ու գիրքերը բացուեցան: Դան. Է. 9, 10: Դանիէլ տեսաւ թէ, հրեշտակներու բազմութիւնը, երկինքի ամպերուն մէջ, Որդոյ Մարդոյ նման մէկը Հինաուրցին առջեւ բերին: Հմր. 13: Աս մեծափառ անձը, չարութեան երեսէն նեղութիւն կրողներուն գլուխը եղող Տէր Յիսուս Քրիստոսն է, որ, մեր նախածնողքին մեղանշելուն պատճառով, չարութեան տիղմին մէջ ընկղմած մարդկային ազգը աղատելու համար երկինքէն մէջ ընկղմած մարդկային ազգը աղատելու համար երկինքէն իջաւ ու չարերուն մէջ բնակեցաւ. անոնց կողմէ նեղութիւն իջաւ ու չարերուն մէջ խաչուեցաւ, սակայն, երրորդ օրը, Աստուած զԱնիկա մեռելներէն յարուցանելով, Իր աջ կողմը նստեցուց: Ինչպէս որ Սաղմոս ճԺ. ի մէջ ալ գրուած է. «Տեր իմ Տերոջս ըսաւ, նստ իմ աջ կողմս, միևնջեւ քու բռնաւորներդ ստեղծուող պատուական ընեմ»: Յիսուս, իր երկինք երթալէն ի վեր, Աստուծոյ սահմանուած, կենդանիներուն ու մեռելներուն դատաւորն ըլլալով (Գործ. Ժ. 42), երբ որոշեալ ժամանակը գար՝ երկիրը արդարութիւնով պիտի դատէր: Գործ. Ժ. 31: Ինչպէս որ Ինքն ալ ըսաւ, «Հայրը մեկը չղաւեր, հապաւ ամեն դասասանը Որդոյն տուաւ:» Յով. Ե. 22. Ասոր համար Որդին Մարդոյ ևս առեանին առջեւ կը բերուի:

Երբ Տէր Յիսուս՝ Հինաուրցին առջև կը բերուի, երկնային ամբողջ բազմութեան առջև արձանագրութեան գիրքերը կը բացուին ու յետագայ երկու պարագաներ նկատի կ'առնուին. — Սուրբերուն իրաւունք տրուիլը, և պզտիկ եղջիւրը կրող չորրորդ գազանին վախճանը: Մարդկային անհատներուն ամենն ալ քննուելով Բարձրեալին սուրբերը կ'ընտրուին, և բոլոր մարգարէներուն բերանով խոստացուած իրաւունքը, այսինքն թագաւորութիւնն ու փառքը անոնց կը վճուուի, ու իրագործուելու համար կը յանձնուի անոնց փախանորդը եղող Տէր Յիսուս Քրիստոսի: Դան. Է. 14, 21:

Աստուածային ատեանին մէջ, Պապական իշխանութիւնը ցուցնող պզտիկ եղջիւրին խօսած մեծ խօսքերն ալ քննութեան կ'առնուին: Պզտիկ եղջիւրը, չորրորդ գազանին՝ այսինքն Հռովմէական թագաւորութեան բոլոր զօրութեանը տէր ըլլալով երբ իշխեց ամէն ցեղի, և լեզուի ու ժողովուրդի վրայ, ինքզինք Աստուծոյ տեղ դրաւ, սակայն, Աստուածային ատեանին մէջ կը հաստատուի որ ան է «Մեղաց մարդը կորստեան որդին», «այն հակառակորդը», «աւրոյ պղծութիւնը»: [*] Եւ Տէր Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստին, կրակէ լիճը ձգուելով փճանայու կը դատապարտուի:

Դատաստանը լրանալուն, Յիսուս Քրիստոս՝ սուրբերուն տրուելու համար Իրեն յանձնուած թագաւորութիւնով երկինքէն կ'իջնէ, ու բոլոր սուրբերը մեռելներէն յարուցանելով անոնց կուտայ թագաւորութիւնը: Ինչպէս որ գրուած ալ է. «Թագաւորութիւնը Բարձրեալին սուրբերը պիտի առնեն, ու անոնք պիտի ժառանգեն քաղաւորութիւնը յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտեանից:» Եւ դարձեալ «Թագաւորութիւնը ու իբխանութիւնը, ու բոլոր երկինքին սակ եղող քաղաւորու-

[*] Բ. Թեո. Բ. 1—8: Դան. ԺԱ. 31

թիւններուն մեծութիւնը Բարձրեալին սուրբերուն ժողովուրդին պիտի տուի. անոր քաղաւորութիւնը յաւիտեանական քաղաւորութիւն է, ու բոլոր իբխանները անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին:» Դան. Է. 18, 28:

Նոյն ատեն, չորրորդ գազանը, կրակի բոցերուն տրուելով կը կորսուի: Նախապէս ըսուածին համաձայն, չորրորդ գազանը Հռովմէական թագաւորութիւնն է, որ 500 տարի ժամանակամիջոցի մը չափ բացարձակօրէն աշխարհի տիրապետելէ վերջ, տասը թագաւորութիւններու բաժնուեցաւ, Այս բաժանումէն ետքը, Հռովմէական թագաւորութիւնը սոյն տասը թագաւորներուն ամբողջութենէն բաղկացած ըլլալով, յետոյ, երբ սոյն թագաւորութիւնները քաջալերեցին Պապական կազմակերպութիւնը, Հռովմէական թագաւորութիւնը երեւան եկաւ Պապական իշխանութեան մէջ: Եւ Յ. Տ. 1798—1870, քաղաքական իշխանութիւնը Պապին ձեռքէն առնուելէ վերջ, Հռովմէական թագաւորութիւնը կրկին բաղկացաւ գազանին ցոյց տուած թագաւորութիւններուն ամբողջութենէն: Եւ Ս. Գիրք մեզի լուր կուտայ թէ ասոնք ժամանակ մը թէեւ բաժնուեցան Պապական կազմակերպութեան, և սակայն, անոր մոզութիւններէն դարձեալ գրաւուելով, անոր հետ անգամ մը եւս պիտի միանան: Աս կերպով միաբան եղած ատենինք. Հռովմէական թագաւորութիւնը կրկին բաղկացած կ'ըլլայ գազանին եղջիւրներէն և Պապական կազմակերպութիւնը ցոյց տուող պզտիկ եղջիւրէն: Տէր Յիսուս Քրիստոս երբ երկինքէն իջնէ, սոյն միաբանութիւնը իրեն դէմ ժողովուած կը գտնէ, ու կը փճացնէ գանոնք կրակի բոցով: Յայտ. ԺԹ. 11—21:

Թէ ինչո՞ւ համար Աստուած իր արդար դատաստանը՝ Պապական կազմակերպութեան 1260 տարուան իշխանութենէն վերջը յետաձգած է: Ս. Գիրք ասոր գաղտնիքը կը յայտնէ մեզի: Սատանային կողմէ մեր նախաձնողքին մէջ ցանուած

չարութեան սերմը անելու, և մեծ ծառ մը ըլլալով իր տալիք ամէն տեսակ պտուղը տալու էր: Պապական կազմակերպութիւնը մեղքին ծայրագոյն աստիճանն էր, որ 1260 տարի, Հռովմէական թագաւորութեան զօրութիւնը իր ձեռքին մէջ գտնուելով, բոլոր ազգերուն անէծքի պատճառ ըլլալով հանգերձ, Բարձրեալին սուրբերն ալ վերջին աստիճան մաշեց: Ասիկա տեղի ունենալէն վերջ, մեղքին դէմ երբ Աստուծոյ վճիռը իրականանայ, ան ատեն յայտնի է թէ ամէն լեզու պիտի խօստովանի Աստուծոյ արդար ըլլալը:


Ինչ է Պապական կազմակերպութիւնը.— Հռովմէական Կաթոլիկ եկեղեցիին Հռովմէական թագաւորութեան հետ միացումն է: Հռովմի եկեղեցին, Տէր Յիսուսի առաքեալներուն քարոզած աւետարանին վրայ հիմնուած խիստ մաքուր եկեղեցի մըն էր: Պօղոս առաքեալին Հռովմայեցիներուն գրած թուղթին մէջ գրուած է. « Կը գոհանամ իմ Ասուծմեա... որ ձեր հաւատքը բոլոր աշխարհի կը պատմուի: » Հռովմ. Ա. 8: Հաւատքի կողմէն երբ այսքան գովելի էր, վերջերք, կռապաշտներուն կրօնական խորհուրդներուն սիրահարելով, և այն կրօնքին ամբողջ վարդապետութիւն ու սովորութիւնները ընդունելով, բոլորովին ապստամբեցաւ Տէր Յիսուսի հաւատքէն: Եւ ժողովուրդը կառավարելու համար, Աստուծալին կարողութեանէն ինքզինք գրկուած տեսնելով, ներկայ եղող Հռովմէական թագաւորութեան սիրահարեցաւ ու անոր հետ ամուսնանալով հոգևորապէս շնութիւն ըրաւ Յիսուս Բրիտոսի դէմ: Յայտ. Ժէ. 1-6: Հին ժամանակներ, Հեթանոս կրօնքներ՝ կառավարութիւններու հետ ամուսնանալով. իբրև չարութեան գործիք՝ աշխարհի աւերումներուն պատճառ եղած էին: Ասոնցմէ ամենասոսկալին Հեթանոս Հռովմէական թագաւորութիւնն էր որ երկրիս մեծ վնաս հասցուց երբ սոյն թագաւորութիւնը հեթանոսութենէն բաժնուելով Հռովմէական եկեղեցիին հետ ամուսնացաւ, անոր նպատակին ծառայելու

մէջ ալ աւելի շատցուց իր կատաղութիւնն ու սասկուծը: Չարութեան կազմակերպութիւնը կատարեալ եղաւ, ու կարգը եկաւ Աստուծոյ արդար դատաստանին:

137
39

ՈՐՈՇԵՆՔ ԴԻՐՔԵՐՆԻՍ

Գաղաններուն ցոյց տուած թագաւորութիւնները, որոնք Դանիէլ մարգարէին յայտնուեցան, իրարու ետեւէ յաջորդաբար ծագում առին, այսինքն՝ Բաբելոնի, Մարաց, Պարսից, Յունական ու Հռովմէական թագաւորութիւնները: Հռովմէական թագաւորութեան միութիւնը կոտորելով տասը թագաւորութիւններու բաժնուեցաւ: Յետոյ, անոնց մէջէն Պապական իշխանութիւնը ծագում առնելով ճիշտ 1260 տարի երկիրը աւերեց ու Բարձրեալին սուրբերը մաշեց: Սոյն ժամանակամիջոցին վերջը, Պապական իշխանութիւնը սոսկալի կերպով վիրաւորուեցաւ: Ասոնց ամենը տեղի ունեցան. այսօր, Աստուծոյ դատաստանին ատենն է զոր կ'ապրինք: Երկիրքի մէջ, արդար ատենը գրուած ըլլալով, աս աշխարհիս դատը կը նայուի: Թէև տեսարանը մեր տեսութենէն դուրս է, և սակայն, Ս. Գիրքի ճշմարիտ վկայութեան ապաւինելով, ականատես դիտողի մը պէս կը հաւատանք: Մարգարէութեան մը բոլոր գէպքերը իրականացած ըլլալով միայն անոր վերջին մասին կասկածիլը բնաւ չիտակ չի կրնար ըլլալ: Արդարև, աշխարհիս վախճանը շատ մօտ է, Աստուած ամեն իրաւունքը տեղը պիտի բերէ:



ԻՆՉ ԸՆԵՆՔ

Անիրաւութենէ զգուշանանք: Աստուած Եսայի մարգարէին ձեռքով կը պատուիրէ, «Իրաւունքը պահեցե՛ք ու արդարութիւն ըրէ՛ք, քանզի իմ փրկութիւնս գալու եւ արդարութիւնս յայտնուելու մօտ է: Երանի՛ այն մարդուն՝ որ ասիկա կ'ընէ. ու մարդու որդիին՝ որ ասիկա ամուր կը բռնէ, այսինքն Շաբարը կը պահէ ու զանկա չպղծեք, եւ ամեն անիրաւութիւն ընելէ իր ձեռքը ետ կը պահէ:» Եսա. ԾՁ. 1. 2: Աստուծոյ առջև աս է իրաւունքն ու արդարութիւնը. որուն կատարեալ չափը, Սինա լեռնէն, Աստուածային ձայնին կտակած Տասնաբանեայ պատուիրանքն է: Ե՛լ. Ի. 1-17: Աստուածային ատեանին առջև ամէն մարդ աս օրէնքով պիտի դատուի: Տակաւին ատեանին առջև չի բերուած, սոյն չափանիչով չափենք ինքզինքնիս ու ամեն անիրաւութենէ հեռու կենանք:

Վրէժ չառնենք: «Իմա է վրէժխնդրութիւնը ու հասուցումը» կ'ըսէ Տէրը: Բ. Օր. ԼԲ. 35: Ուրեմն, մեր անձերուն համար վրէժ չառնենք, հապա Աստուծոյ բարկութեան անդ տանք: «Ուստի, եթէ քու քեանմիդ անօրեցեք է՝ հաց տու անոր, եւ եթէ ծարաւ է՝ ջուր տու անոր. քանզի զայս ընելով անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես: Չարէն մի յաղթու իր, հապա բարիով յաղթե յարին:» Հռովմ. ԺԲ. 19-21:

Համբերենք: Դատաստանի սկսող Աստուածը չուտով պիտի լրացնէ զանիկա:

Ինչպէս որ Տէր Յիսուսի համար գրուած է «ինքզինք արդարութեամբ դատողին կը յանձնէ» (Ա. Պետ. Բ. 23), մենք ալ անանկ ընենք: «Հապա Աստուած իր ընտելանքներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն, քեռ երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ: Ձեզի կ'ըսեմ որ տուտով անոնց իրաւունք պիտի ընէ:» Դուկ. ԺԸ. 7. 8:

Չանազան չար կազմակերպութիւններէ ետ կենանք: Մեզքը մեղք է, մէ՛կ անձի կողմէն իսկ ըլլայ, և կամ բազմութիւնով կատարուի: Աստուծոյ օրէնքին մէջ գրուած է, «Չարութիւն ընելու համար բազմութեան չինտելիս:» Ե՛լ. ԻԳ. 2: Անոնք որ Աստուծոյ օրէնքին ու Անոր յաւիտենական նախասահմանութեանը կը հակառակին, անոնց ընկերակցութեան բնաւ չի մտնենք, ինչու որ, անոնց չար նպատակներուն ծառայելով, Աստուածային ատեանի դատաստարութեանը ենթակայ կ'ըլլանք:

Տէր Յիսուսի հաւատանք, ինչու որ Աստուած մեր բոլոր իրաւունքներուն հատուցումը Անով պիտի կատարէ մեզի: Ետտով հաւատանք, դեռ Աստուածային ատեանը չի փակուած:

Անիկա է աս աշխարհիս Դատաւորն ու թագաւորը: «Երանի՛ այն ամենուն որոնք Անոր կը յուսան:» Սաղմ. Բ. 12:



«Ազգային գրադարան»



NL0028574

1978

Տեորակի ընկերութիւնը կը հրատարակէ Բրիտանական գիրքեր,
թերթեր եւ տետրակներ աւելի քան 70 լեզուներով: Անգլիէրէն, Գեր-
մաներէն, Ֆրանսերէն, Սպաներէն, Հոլանտերէն, Տաիվարքերէն եւ Շուե-
տերէն գրացուցակները ճոխ են պարունակութեամբ: Կա եւ առատ հրա-
տարակութիւնք կան Ռուսերէն, Փոլոներէն, Պոնէմերէն Իտալերէն, Լե-
տոներէն, Հունգարերէն, Իտալերէն, Փորթուգէզերէն, Բուսաներէն, Հա-
յերէն, Տանկերէն, Յունարէն, Արաբերէն, ևն. լեզուներով: Գրացու-
ցակներ ձրի կը ղրկուին:

Հասցէ.—

Société de Traités.

Poste Allemande, Boite 109.

(Turquie)

Galata, Constantinople.

HAMBourg, Grindelberg 15 a, Allemagne .
BALE, Nonnenweg 22, Suisse .
WATFORD, Stanborough Park, Herts, Angleterre .
CHRISTIANIA, Akersgaden 74, Norvège .
RIGA, Kl. Newastr. 12, Russie .
NEW YORK CITY, 32 Union Square East, Etats Unis .
WASHINGTON D. C., Takoma Park Station, Etats Unis .
MOUNTAIN VIEW, Santa Clara Co., California, Etats Unis .
PORT HOPE, Ontario, Canada .
TACUBAYA, D. F., 1420 Avenida 20, Mexico .
PORT OF SPAIN, 31 Dundonald Street, Trinidad .
SAO BERNARDO, Estacao S. P. R., Sao Paulo, Brésil .
BUENOS AIRES, Florida, F. C. C. A., Argentine .
SANTIAGO, Casilla 43, Correo 3, Chile .
CAPE TOWN, 56 Roeland Street, Afrique de Sud .
LUCKNOW, 19 Banks Road, Inde .
SHANGHAI, Box 323 U. S. Postal Agency, Chine .
TOKIO, 846 Sendagaya—Machi, Japon .
SOEUL, Korea .
WARBURTON, Victoria, Australie .
COORANBONG, Avondale, N. S. W., Australie .

